

Մարզպետը աշխատանքային այցով Կալավանում էր

29.06.2017

Հունիսի 29-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային շրջայց կատարեց Ճամբարակի տարածաշրջանի Կալավան համայնքում: Բնակիչների հետ հանդիպման ընթացքում մարզպետը նշեց, որ «Թայմ Լենդե գիտաուսումնական հիմնադրամի գործունեության արդյունքում բազմապատկվել են տարբեր երկրներից դեպի Կալավան զբոսաշրջային հոսքերը, ինչն անհրաժեշտություն է առաջացրել տեղում լուծելու վերջիններիս գիշերակացի հարցը:

Կարեն Բոթոյանը եղավ Կալավանի մի շարք բնակարաններում, որոնց սեփականատերերը ստեղծել են զբոսաշրջիկներին գիշերակացով ապահովելու պայմաններ, եղավ նաև այն բնակարաններում, որտեղ չկան անհրաժեշտ պայմաններ, սակայն առկա է նման պայմաններ ստեղծելու սեփականատերերի ցանկությունը: Սույն խնդրով մարզպետը բնակիչների հետ քննարկումներ անցկացրեց, որոնց արդյունքում նախանշվեցին դրա լուծման համար հնարավոր նախնական տարրերակները:

Հանդիպման ավարտին Կարեն Բոթոյանը «Թայմ Լենդե գիտաուսումնական հիմնադրամի հիմնադիր, տնօրեն Ռոբերտ Ղուկասյանի ուղեկցությամբ եղավ այն վայրերում, ուր աշխարհի տարբեր վայրերից այցելում են արկածային տուրիզմի հարյուրավոր սիրահարներ: Ռոբերտ Ղուկասյանը նշեց, որ կան բազմաթիվ գաղափարներ, որոնց մի մասն արդեն իսկ բերված են ծրագրային տեսքի, իսկ դրանց իրականացումը ամբողջ տարածաշրջանը գրավիչ է հարմարավետ կդարձնեն տասնյակ հազարավոր զբոսաշրջիկների համար: Կարեն Բոթոյանն իր հերթին վստահեցրեց, որ պետությունը պատրաստ է իր հնարավորությունների շրջանակներում աջակցել նման խնդիրների կյանքի կոչմանը և որ այս տարածաշրջանը, նաև զբոսաշրջության շնորհիվ կարող և պետք է զարգացման առաջանցիկ տեմպեր գրանցել: